

ՀԱՅԳՈՒՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Փիլիսոփ. գիտ. դոկտոր Ս. Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Հայ գրերի գյուտից հետո սկսված դպրության զարթոնքը մեր հոգևոր մշակույթի պատմության մեջ բազմախորհուրդ և աննախադեպ երևույթ էր։ Մովորական, համընդհանուր պատկերացումներով հնարավոր չէ բացատրել թարգմանական և ինքնուրույն հայ գրականության այն բարձրարվեստ ու բազմաբովանդակ հուշարձանների առատությունը, որ երևան եկան V—VI դարերում։ Այդ գրականության բուռն աճը և հարստությունը բացատրելու համար որոշ հետազոտողներ նույնիսկ օրինական են համարում առաջ քաշել մինչմաշտոցյան հայ դպրության հարցը։ Սակայն պատմական պայմանների համակողմանի ուսումնասիրումը, V դարի Հայաստանի հոգևոր կլիմայի սթափ քննությունը հերքում է այդ ենթադրությունը և բացահայտում Մաշտոցի ու նրա զինակիցների սխրանքի ակունքները, էությունը և պատմա-մշակութային նշանակությունը։

Ավատատիրական հարաբերությունների խորացման, հայ հին պետականության ճգնաժամի պայմաններում եկեղեցու՝ որպես սոցիալ-քաղաքական գործոնի ուժեղացման, քրիստոնեության արմատավորման ու վերջնական հաղթանակի հետ կապված երևույթների համատեղ զննումը հնարավորություն է տալիս ըմբռնելու IV դարի վերջի և V դարի սկզբի քաղաքական-գաղափարական մթնոլորտը, որը պայմանավորեց ինչպես հայ գրերի ստեղծումը, այնպես և ողջ հոգևոր մշակույթի զարթոնքը։ Պատմական այդ երևույթների վրձնական նշանակության գնահատմամբ միայն հնարավոր է բացահայտել հայ գրականության լինելության ընթացքի էությունը, իր դարաշրջանի համար մի հարստագույն գրականության, որն այլ պայմաններում կազմավորման համար կպահանջեր մի քանի հարյուրամյակ։ Տվյալ դեպքում հետազոտողի առջև ուրվագծվում է չափազանց յուրօրինակ մշակութային մի հեղաշրջման համայնապատկեր, որը նորոգեց ժողովրդի ողջ հոգեկան աշխարհը, ընդ որում այնպիսի անբարենպաստ քաղաքական պայմաններում, երբ դրված էր նրա՝ որպես ինքնուրույն միավորի կենաց ու մահու հարցը։ Այդ իրավիճակում սեփական լեզվի, մշակույթի, հոգևոր ինքնուրույնության պաշտպանության խնդիրը ամբողջ սրությամբ առաջ քաշեց հայ գրերի ու գրականության՝ որպես համախըմբման մի հզոր զենքի ստեղծման հարցը։

Գրերի գյուտից հետո մի քանի տասնամյակների ընթացքում հայ հեղինակների ստեղծած ինքնուրույն ու թարգմանական երկերը եկան զինելու արտաքին և ներքին թշնամիների դեմ ծավալված պայքարը գլխավորող հայ իշխող դասերի գաղափարախոսներին, մտավորականներին։ Այդ երկերը և թարգմանությունները կազմում են հայ հին դպրության ոսկե ֆոնդը։ Սակայն ներառյալ մշակութային արժեքն ու նշանակությունը չի սահմանափակվում զուտ

հայկական շրջանակներով, նրանք պատվավոր տեղ են դրավում համաշխարհային գրականության ու գիտության պատմության մեջ:

Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը և հայ դպրության ակունքներում կանգնած նրանց աշակերտներն ու գինակիցները խորապես գիտակցել են այլ ժողովուրդների գրականության ու գիտության հուշարձանների նշանակությունը նորածին հայ գրականության կազմավորման ու աճի համար: Այդ է վկայում Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի ու նրանց շուրջը համախմբված մըտավորականների թարգմանչական լայն գործունեությունը: Նրանք քաջ գիտակցում էին, որ թարգմանությունների միջոցով կարելի է ավելի արագ հագեցնել հայ հասարակության հոգևոր ծարավը, մինչև որ հայ միտքը, թարգմանական գրականության օրինակների վրա սովորելով, ուժ կհավաքի ինքնուրույն ստեղծագործության ուղին բռնելու համար: Հունարենի և ասորերենի իմացությունը խորացնելու և անհրաժեշտ գրական հուշարձանները հայերեն թարգմանելու նպատակով նրանք աշակերտների տարբեր խմբեր ուղարկում են Միջագետք, Բյուզանդիա և Ալեքսանդրիա: Նույն միջոցին Սահակն ու Մեսրոպը առանց հապաղելու կազմակերպում ու տնօրինում են թարգմանչական աշխատանքը բուն Հայաստանում, անձամբ ձեռնամուխ լինելով թարգմանություններին և հանձնարարություններ տալով իրենց շուրջը համախմբված թարգմանիչներին:

Ինչպես հայտնի է, ողջ գրական ու գաղափարական բնագավառը այն ժամանակ գտնվում էր հոգևորականության ձեռքում և եկեղեցու հսկողության ներքո: Եվ, բնականաբար, թարգմանությունների ընտրությունը և թարգմանական աշխատանքի նպատակադրումները պետք է արտացոլեին եկեղեցու և կրոնի պահանջմունքներն ու շահերը: Այդ իսկ պատճառով միանգամայն հասկանալի ու օրինաչափական է, որ Մաշտոցի և Սահակ Պարթևի հիմնադրած թարգմանչական դպրոցի գործունեության հիմքում դրված էր իրենց ժամանակակից քրիստոնեական աշխարհում արդեն համընդհանուր տարածված գտած կրոնական գրականության ու կրթության ծրագիրը, որը, ինչպես հայտնի է, բնագրվում էր ութ հիմնական բաժիններ. ա) բիբլիկա (աստվածաշնչագիտություն, Ս. Գրքի իմացություն և թարգմանություն), բ) հերմենևտիկա (մեկնաբանություն, Ս. Գրքին նվիրված մեկնողական գրականություն, վերծանություն ու բացատրություն), գ) ապոլոգետիկա (ջատագրություն), դ) լիտուրգիկա (պաշտամունքային, ծիսական գրականություն), ե) պատրիստիկա (հայրաբանություն), զ) մարտիրոգիա և հադիոգրաֆիա (վկայաբանություն և սրբախոսություն, վարքադրություն), է) կանոնիկա (կանոնաբանություն), ը) հիստորիկա (պատմական գրականություն, եկեղեցական պատմագրություն):

V դարի, հատկապես նրա առաջին կեսի, հայ մատենագրության բաղմահարուստ ժառանգության հետադուրումը նշված կյասիֆիկացիայի տեսանկյունից ցույց է տալիս, որ գրական-թարգմանչական աշխատանքը գիտակցված ու հետեղականորեն հետապնդում էր մի նպատակ՝ թարգմանությունների միջոցով հնարավորին չափ կարճ ժամկետում բավարարել եկեղեցու ամենաանհրաժեշտ պահանջները և նախադրյալներ ստեղծել հայ եկեղեցական գրականության համար, որը գաղափարական հենարան սլիտի դառնար եկեղեցու ինքնուրույնության և հասարակական-քաղաքական դիրքի սովորացման համար ծավալված պայքարում:

Այդ նպատակադրման համաձայն, Մաշտոցի և Սահակ Պարթևի հիմնադրած թարգմանչական դպրոցը առաջին հերթին պետք է իրագործեր Բիբլիայի՝ Աստվածաշնչի թարգմանությունը, որը պաշտոնապես ընդունված կրոնի հիմքն էր և նրա կարևորագույն աղբյուրը։ Եվ իրոք, այդ գլխավոր գործը ըսկըսեց իրականացվել գրերի գյուտից անմիջապես հետո։ Դեռևս 405 թ. Սամսատում գտնված ժամանակ Մեսրոպ Մաշտոցը սկսում է թարգմանել «Սողոմոնի առակները»։ Աստվածաշնչի թարգմանության հիմնական ծանրությունը, սակայն, իր վրա է վերցնում Սահակ Պարթևը, որը և 405—408 թթ. թարգմանում է այն ասորերեն Փեշիտտա կոչված բնագրից, ձեռքի տակ չունենալով եբրայերենը կամ հունարենը։ Այդ թարգմանությամբ բավարարվում էին շուրջ քառորդ դար, մինչև 432—433 թթ., երբ Կոստանդնուպոլսից վերադարձած Եզնիկ Կողբացին, Կորյունը, Հովսեփ Պաղնացին և Ղևոնդը, ի թիվս մի շարք կարևոր գրքերի, իրենց հետ բերում են հունարեն Յոթանասնից թարգմանության մի ընտիր օրինակ։ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը, Եզնիկ Կողբացու ու Հովսեփ Պաղնացու հետ միասին, սկսում են համեմատել ասորերենից կատարված թարգմանությունը բերված հունարեն բնագրի հետ և փաստորեն կատարում են Աստվածաշնչի երկրորդ թարգմանությունը։ Եվ այդ երկրորդ, ժամանակի ամենահմուտ ու նրբաճաշակ հայ գրագետների կողմից կատարված վերջնական թարգմանությունը դառնում է դասական հայերենի մաքրության չափանիշը։ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը համարվում է «թարգմանությանց թագուհի»։

Աստվածաշնչի, նրա Հին ու Նոր կտակարանների թարգմանությունը, բացի եկեղեցու համար ունեցած կարևոր նշանակությունից, մեծ դեր խաղաց հայ գրականության զարգացման գործում և հսկայական ազդեցություն ունեցավ հին Հայաստանի, իսկ այնուհետև՝ ողջ հայ միջնադարի մտավոր կյանքի բոլոր բնագավառների վրա։ Անշուշտ, նա իր խոր կնիքը դրեց ժամանակաշրջանի բոլոր գրողների մտայնության վրա, որոնք տոգորված էին կրոնական ոգով, բայց կարևորն այս դեպքում այն է, որ Ս. Դրքի թարգմանությունը զարկ տվեց գրական լեզվի, գրականության ու տեսական մտքի զարգացմանը և, ճեղքելով նեղ պաշտամունքային շահերի շրջանակը, հանդիսացավ մի օրինակելի գրական հուշարձան, որով իր խոստումնալից մեկնարկը վերցրեց հայ մատենագրությունը։

Սակայն իր բաղմաշերտ ու խայտաբղետ կառուցվածքով, շատ տեղերում մթին բովանդակությամբ Աստվածաշունչը չէր կարող հեշտ ընկալվել առանց բացատրությունների ու մեկնությունների։ Ս. Դրքի և մասնավորապես նրա Նոր կտակարանի դրույթները, քրիստոնեության ուսմունքը՝ եկեղեցու տեսակետից ճիշտ ըմբռնելու ու մատուցելու մտահոգությամբ կյանքի էր կոչվել մեկնողական գրականությունը՝ հերմենևտիկան։ Այդ մեկնողական բացատրական գրականության թարգմանությունը սկսեց իրագործվել Աստվածաշունչի թարգմանության հետ գրեթե միաժամանակ։ V դարի առաջին կեսին, ապա և հաջորդ տասնամյակներում ավագ և կրտսեր թարգմանիչները հրապարակ հանեցին հռչակավոր եկեղեցական մեկնիչներ Բարսեղ Կեսարացու, Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու, Աթանաս Ալեքսանդրացու, Գրիգոր Աստվածաբանի, Կյուրեղ Ալեքսանդրացու և ուրիշների մեկնողական գործերի հայացված մի հարուստ գրադարան։ Այդ թարգմանությունները, բացի հայ հին գրականության զարգացման գործում խաղացած մեծ դերից, եզակի արժեք

են ներկայացնում համաշխարհային դրականության ու գիտության պատմության համար ոչ միայն որպես հնագույն ու բարձրարվեստ թարգմանություններ, այլև այն պատճառով, որ դրանց հունարեն և ասորերեն բնագրերի զգալի մասը չի պահպանվել:

Մեկնողական գրականության հետ սերտորեն առնչվում էր ջատագովությունը, որի նպատակն էր պաշտպանել քրիստոնեական ուսմունքը հեթանոսական կրոնի և աշխարհայացքի հետևորդների հարձակումներից, տեսականորեն հիմնավորել քրիստոնեությունը և արդարացնել, «ջատագովել» այն՝ մյուս կրոնների դեմ մղած պայքարում: Հին հայ թարգմանիչները այդ գծով իրականացրել են քրիստոնեական աշխարհում ճանաչված ջատագովներ Արիստիդես Աթենացու, Հիպոլիտի, Մեթոգիոս Ուիմպիացու, Եպիփան Կիպրացու և այլոց երկերի թարգմանությունները: Ջատագովների գրվածքներում առավել ցայտուն կերպով դրսևորվել է քրիստոնեության փիլիսոփայությունը, որն իրեն հակադրում էր անտիկ շրջանի աշխարհիկ փիլիսոփայական ուսմունքներին, մանավանդ մատերիալիստական և աթեիստական ուղղություններին: Հունական ջատագովների ճանապարհով են ընթացել նաև առաջին հայ մտածողներ Մեսրոպ Մաշտոցը և Եղևիկ Կողբացին, որոնք իրենց ինքնուրույն աշխատություններում առատորեն օգտվել են նրանց երկերից, մեջբերելով նրանցից էական դրույթներ և ամբողջ հատվածներ:

V դարի առաջին կեսում կատարված թարգմանությունները խմբավորվում են ըստ հետևյալ բաժինների. լիտուրգիկա՝ ծիսական երկեր (պատարագամատույց, ժամագիրք և այլն), պատրիստիկա՝ հայրախոսական գրականություն (եկեղեցու նշանավոր «հայրերի» բարոյախրատական և քրիստոնեական-իմաստասիրական բնույթի ճառեր, քարոզներ, թղթեր և այլն), մարտիրոլոգիա և հագիոգրաֆիա՝ վկայաբանություն և վարքագրություն (հավատի համար մարտիրոսացած անհատների և եկեղեցական նշանավոր գործիչների կենսագրություններ), կանոնական գրականություն (եկեղեցական ժողովների և առանձին կրոնական գործիչների կողմից գրված կանոններ և սահմանումներ), պատմական գրականություն, որը լուսաբանում է ինչպես քրիստոնեական եկեղեցու, այնպես և տարբեր ժողովուրդների ու երկրների պատմություններ:

Անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել 405 թվականից՝ շուրջ 60-ամյա ժամանակամիջոցում կատարված հայերեն թարգմանությունների ցանկը, որը օգտակար կլինի տարբեր տեղերում ցրված տեղեկությունների մատենագիտական ամփոփման և մանավանդ V դարի առաջին կեսի գաղափարական մթնոլորտի լուսաբանման համար: Այն հետաքրքրական է նաև տվյալ շրջանի հայ թարգմանիչների և առաջին ինքնուրույն հեղինակների գրական գործունեության բնութագրման տեսակետից: Թարգմանական երկերի այս ցանկը հասնում է մինչև 462 թ., այսինքն մինչև Աբրահամ Խոստովանողի թարգմանությունները, որոնցով, ինչպես հայտնի է, ավարտվում է դասական դարբարով ստեղծված ինքնուրույն և թարգմանական գրականության զարգացման շրջանը: Ցանկում մենք նշում ենք այն թարգմանությունները ու նրանց կատարման այն հայտնի թվականները, որ մոտավոր ճշտությամբ կամ ստույգ որոշված են բանասերների մի քանի սերունդների կողմից:

Աստվածաշունչ (405—408 թթ.՝ առաջին թարգմանություն՝ ասորերենից. 432—435 թթ.՝ երկրորդ, վերջնական թարգմանություն՝ հունարենից):

Պատարագամատույցներ (թարգմ. հունարենից և ասորերենից)։

Աթանաս Ալեքսանդրացու 15 հոգևոր ճառեր (թարգմ. հունարենից)։

Ժամագիրք (թարգմ. հունարենից)։

Հովհան Ոսկեբերանի ճառեր, քարոզներ և մեկնություններ (թարգմ. հունարենից)։

Կյուրեղ Ալեքսանդրացու «Ծննդոց զրբին» և Պողոս առաքյալի թղթերին նվիրված մեկնություններ, «Ճառ սբ. Երրորդության մասին», նամակներ Նեստորին և 12 անեծք (թարգմ. հունարենից)։

Եվթաղի «Նախաբանները և մեկնությունները», նվիրված «Գործք առաքելոցին» և Պողոս առաքյալի թղթերին (թարգմ. հունարենից)։

Հիերոնիմոսի մեկնությունը, նվիրված հրեաներին ուղղված 24 թղթերին (թարգմ. հունարենից)։

Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունը» (416—420 թթ., թարգմ. ասորերենից)։

Նալիփան Կիպրացու «Մարգարեների վախճանի մասին» (թարգմ. հունարենից)։

Ուրբերիանոս Գաբաղացու ճառեր (թարգմ. հունարենից)։

Եվագր Պոնտացու ճառեր և մեկնություններ (թարգմ. հունարենից)։

Եվսեբիոս Նմեսացու ճառեր (թարգմ. հունարենից)։

Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայության» (թարգմ. հունարենից)։

Հիպոլիտ Բոստրացու ճառեր և մեկնություններ (թարգմ. հունարենից)։

Բարսեղ Կեսարացու «Վեցօրյա արարչության մասին», ինչպես և ճառեր, մեկնություններ ու խրատներ (թարգմ. հունարենից)։

Արիստիդես Աթենացու «Քրիստոնեական հավատի ջատագովություն» (420—430 թթ., թարգմ. հունարենից, հուն. բնագիրը չի պահպանվել)։

Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը» (430-ական թթ., թարգմ. հունարենից, հուն. բնագիրը չի պահպանվել)։

Պրոկլ Եպիսկոպոսի թղթերը՝ ուղղված Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին (430-ական թթ., թարգմ. հունարենից)։

Ակակիոս Մելիտենացու երկու թղթերը (430-ական թթ., թարգմ. հունարենից)։

Եվրեմ Ասորու ճառերը, աղոթքները և Ս. Գրքի մասերին նվիրված մեկնություններ (թարգմ. ասորերենից)։

«Սբ. Թադեոսի և սբ. Սանդուխտի վկայաբանություն» (430 թ., թարգմ. ասորերենից)։

Մեթոդիոս Ուիմալիացու «Անձնիշխանության մասին» (430—440-ական թթ., երկի զգալի մասը օգտագործվել է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցում»։ թարգմ. հունարենից, հուն. բնագիրը չի պահպանվել)։

Նալիփան Կիպրացու «Ընդդեմ աղանդոց» (թարգմ. հունարենից, պահպանվել են հատվածներ Ե. Կողբացու «Եղծ աղանդոցում»)։

Հիպոլիտի «Բոլոր աղանդների հերքումը» (430—440-ական թթ., մասնակի թարգմանություն հունարենից, պահպանվել է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցում»)։

Դրիգոր Սֆանչելագործի «Քրիստոսի ծննդյան մասին» (թարգմ. հունարենից)։

Ափրահատ՝ Իմաստուն Պարսիկ կոչված ասորի հեղինակի ճառերն ու քարոզները, որ վերագրվել են Հակոբ Մծբնացուն (թարգմ. ասորերենից)։

Ջենոբ Ամիղացու ճառը (թարգմ. ասորերենից)։

Այիթալա Նվեսագու ճառը (թարգմ. ասորերենից)։

Գրիգոր Նագիանգացու մեկնություններ և ճառեր (թարգմ. հունարենից)։

Անտիոքի, Գանգրայի, Հաոգիկեի, Նեոկեսարիայի և Նիկեայի եկեղեցական ժողովների կանոններ (430—440-ական թթ., թարգմ. հունարենից)։

Հինգ անվավեր ձանաչված բնագրեր՝ «Պիղատոսի նամակը Տիբերիոս կայսեր», «Նդեսիա Բաղաֆի քաղալուր Աբգարի նամակը», «Հակոբի ուղերձը Կոնդրատիոսին», «Քրիստոսը Պոնտիոս Պիղատոսի առջև», «Առաքյալների վարդապետությունը» (բոլորը, բացի «Աբգարի նամակից», թարգմ. հունարենից, իսկ «Աբգարի նամակը»՝ ասորերենից)։

Սրբերի վկայաբանություններ և եկեղեցու նշանավոր գործիչների վարժեր-կենսագրություններ (թարգմանվել են և՛ հունարենից, և՛ ասորերենից, V դարի առաջին կեսի ողջ ընթացքում)։ Վկայաբանական գրականության վերջին հուշարձանը՝ Մարութա Նփրկերտցու «Արևելքի վկաները», թարգմանվել է ասորերենից 462 թ. կամ ավարտվել է այդ թվականին Աբրահամ Զենակացու (Խոստովանողի) կողմից՝ պարսկական գերության մեջ և 463 թ. ազատ արձակված թարգմանչի կողմից բերվել է Հայաստան։

Այսպիսին է հին հայկական թարգմանիչների, հայ դպրության առաջին գործիչների կողմից հիսուն-վաթսուն տարվա ընթացքում ստեղծված թարգմանական գրականության ընդհանուր պատկերը։ Երկերի վերնագրերն արդեն խոսում են այդ գրականության բնույթի մասին։ Բոլորն էլ, առանց բացառության, ունեն կրոնական բովանդակություն, կապված են քրիստոնեության հիմնավորման ու պաշտպանության, քրիստոնեական ուսմունքին անհարիր փիլիսոփայական հայացքների հերքման խնդիրների հետ, քարոզում ու տարածում են եկեղեցու կողմից ընդունված դավանանքը, լուսաբանում եկեղեցու և առհասարակ քրիստոնեական համայնքների պատմությունը, փառաբանում նրա երևելի գործիչներին ու հավատի համար իրենց կյանքը զոհաբերած նահատակներին և այլն, էլ չենք խոսում անմիջական պաշտամունքային-ծիսական նշանակություն ունեցող Ս. Գրքի, Պատարագամատուցի, Ժամագրքի և նույն բնույթի այլ երկերի մասին։

Թվարկված թարգմանական երկերի ցանկը միանգամայն հստակ ցույց է տալիս, որ դրական-թարգմանչական աշխատանքը, երկերի ընտրությունը և կատարման հերթականությունը գրական մի դպրոցի նախաձեռնություն էր, որը մտածված և մշակված ծրագրի համաձայն հետապնդում էր մի որոշակի նպատակ՝ թարգմանությունների միջոցով հնարավորին չափ սեղմ ժամկետում նախագրյալներ ստեղծել սեփական եկեղեցական գրականության զարգացման համար։

Այդ շուրջ 60-ամյա ժամանակաշրջանի ընթացքում թարգմանական երկերի օրինակով հետզհետե ստեղծվում են առաջին ինքնուրույն հայ իմաստասիրական ու պատմական երկերը՝ «Հաճախապատում ճառերը», Ագաթանգեղոսի «Պատմությունը», Կորյունի «Մաշտոցի վարքը», Եղնիկի «Աղանդների հերքումը» և այլ երկեր։ Այդ ստեղծագործություններին, ինչպես և նույն V դարի առաջին կեսի թարգմանություններին հատուկ է հարուստ ու ճկուն լեզու, ընտիր ոճ, գրական մեծ ճաշակ, այսինքն բոլոր այն առանձնահատկու-

թյունները, որ բնորոշ են դասական հայ դրականությանը: Սակայն եթե առաջին ինքնուրույն գործերում հայ հեղինակները, ազատ լինելով բառերի և դարձվածքների ընտրության մեջ, իրենց մտքերին հմտորեն կարողանում էին տալ ձևոն գրական ձև, ապա թարգմանական երկերի որոշ տեղերում, ուր պատահում էին փիլիսոփայական դրույթներ, մասնագիտական տերմիններ և այլ անվանումներ, թարգմանիչները հին հայերենի գիտական տերմինաբանության պակասի պատճառով ստիպված էին լինում դիմելու նկարագրական վերաշարադրության, երբեմն էլ սխալվում կամ բաց թողնում նման նախադասությունները՝ սայթաքումներից խուսափելու համար: Այդ թերությունները, որ երբեմն պատահում են բարձրարժեք ու նրբաճաշակ դասական թարգմանություններում (օրինակ, Բարսեղ Կեսարացու, Նվսեբիոս Կեսարացու և այլոց երկերում), կախված չէին թարգմանչի գրական ու գիտական պատրաստության աստիճանից: Դրանք պայմանավորված էին հայ գիտական տերմինաբանության դարգացման աստիճանով: Ճշգրիտ տերմինների ստեղծման առաջին փորձեր հանդիպում են Եղնիկ Կողբացու երկում, բայց դրանք շատ չեն և չունեն կայուն բնույթ:

Մինչև V դարի 60-ական թթ. կրոնա-մեկնողական, հայրախոսական և պատմական երկերի թարգմանությունները, ինչպես և հայ հեղինակների նույն բնույթի ինքնուրույն ստեղծագործությունները, հիմնականում բավարարում էին հայ մշակույթի գործիչների առաջին սերնդի հոգևոր պահանջմունքները: Այդ երկերը լիովին արտահայտում էին ներքին ու արտաքին հակառակորդների դեմ մղած գաղափարական պայքարի էությունը: Սակայն ականերև է, որ V դարի առաջին կեսի թարգմանական գրականությունը իր բովանդակությամբ և գաղափարական ուղղվածությամբ միակողմանի բնույթ էր կրում: Եվ այն չէր կարող բավարարել նոր սերնդի պահանջները, որն արդեն գործ ուներ նոր հակառակորդների հետ: Սասանյան արքունիքը, հանդիպելով հայ հասարակության բոլոր խավերի կատաղի դիմադրությանը, 50-ական թթ. հետո հրաժարվեց հայերին հավատափոխելու, զրադաշտականություն տարածելու իր ծրագրից: Եվ այդ իրավիճակում, արդեն Բյուզանդական կայսրության սադրանքներով, սկսեցին գլուխ բարձրացնել Քաղկեդոնի ժողովի որոշումների կողմնակիցները, սկսեցին թեժանալ միաբնականների և երկաբնականների վեճերը Քրիստոսի բնության շուրջ: V դարի 50—70-ական թթ. ամբողջ քրիստոնեական աշխարհը ներգրավվեց այդ կատաղի վեճերի մեջ և բաժանվեց երկու լճնամի կողմերի:

Հայ գաղափարախոսները, հոգևորականությունը, հասկանալի է, չէին կարող չորոշել իրենց դիրքը այդ՝ արտաքուստ վերացական բնույթ ունեցող հարցի նկատմամբ: Այն ուներ հեռուն գնացող քաղաքական հետևանքներ. քաղկեդոնականությունը դառնում էր բյուզանդական արքունիքի քաղաքական ձրնշման լծակներից մեկը, հայ եկեղեցին Կ. Պոլսի պատրիարքին և առհասարակ թեոկրատական սկզբունքներով կառուցված կայսրությանը ենթարկելու մի նոր միջոց: Այդ վեճերին մասնակցելու, սեփական դիրքերը պաշտպանելու համար անհրաժեշտ էր ունենալ լուրջ փիլիսոփայական պատրաստություն, իմանալ իմացաբանության և տրամաբանության ուսմունքները, փիլիսոփայության ու կրոնի պատմությունը, վիճաբանության և ճարտասանության կանոնները և մի շարք այլ գիտություններ ու արվեստներ: Աշխարհիկ գիտությունները և աշխարհիկ կրթությունը դիտվում էին արդեն ոչ որպես պերճանք և «արտաքին», հեթանոսական մշակույթի հանդեպ ցուցաբերվող ինչ-որ կասկածելի մի

հակում, այլ անհրաժեշտ հենարան՝ բաղմապիսի աստվածաբանական խնդիրների հիմնավորման ու մեկնաբանման համար, որոնց շուրջ ծագած վեճերը տասնամյակ առ տասնամյակ ստանում էին ավելի սուր բնույթ: Հենց այս պատճառները սրեցին փիլիսոփայական և այլ աշխարհիկ գիտական գրականության ստեղծման հարցը:

Այդ խնդրի իրագործմանը ձեռնամուխ եղան Մաշտոցի կրտսեր աշակերտները՝ սկսած V դարի 60-ական թթ.: Եթե նրանց ուսուցիչների սերունդը հիմնականում սահմանափակվում էր աստվածաբանական-իմաստասիրական խնդիրներով, հայ եկեղեցական գրականության ստեղծումով և գլխավորապես կրոնա-դավանաբանական երկերի թարգմանությամբ, ապա աշակերտների կրտսեր սերունդը, հիմնականում արդեն ազատ լինելով այդ անհրաժեշտությունից, նոր իրավիճակում ստիպված էր իր հայացքը դարձնել նաև աշխարհիկ գրականության ու գիտության հուշարձանների վրա: Աշխարհիկ, բուն գիտական երկերի ստեղծման և այլ լեզուներից նման ստեղծագործությունների թարգմանության համար անհրաժեշտ էր ընդլայնել գրաբարի բառապաշարը, հեռանալ ուսուցիչների լեզվա-ոճական խստությունից, որովհետև դասական հայերենը, իր հարստությամբ հանդերձ, չունեւ չէր էլ կարող ունենալ գիտական տերմինաբանություն, քանի որ իր զարգացման մինչգրավոր շրջանում նա զրկված էր այդ հնարավորությունից, իսկ մաշտոցյան շրջանում առաջնահերթ էին այլ խնդիրներ:

Գիտական գրականության լեզվի մեջ բեկում առաջացնելու համար Մաշտոցի և Եզնիկի աշակերտները թարգմանություններ կատարելիս ստիպված էին դիմել հայերենի ձևաբանության ու շարահյուսության նորոգմանը, հունարենի վրա ձևված բառերի ու դարձվածքների կիրառմանը, մի բան, որը թեև շատերի կողմից կարող էր դիտվել որպես սրբապղծություն, բայց իրականում մեծապես նպաստեց հին հայերենի բառապաշարի հարստացմանը. հատուկ մասնագիտական տերմինների և առհասարակ գիտական լեզվի ստեղծմանը: Այդ բեկումն իրագործելու համար ամենահարմար մարդիկ կարող էին լինել հունական գիտական կենտրոններում իրենց ուսումնասիրության ընթացքում առաջավոր գործիչները, որոնք և հիմք դրեցին այսպես կոչված «հունաբան դպրոցին» կամ «հունաբան ուղղությանը»: Հարավատ ժողովրդի, նրա գիտությունների ու գրականության ապագայի մասին մտահոգված հայրենասեր գործիչների այդ խումբը ձգտում էր հայ գրականության մեջ ներմուծել անտիկ գիտության ու փիլիսոփայության նվաճումները և զարկ տալ հայրենի աշխարհիկ գիտության զարգացմանը:

Անհրաժեշտ է նշել հունաբան դպրոցի գործունեության մի կարևոր առանձնահատկությունը, որը բնորոշում է հունաբաններին և բացատրում նրանց դերն ու բարերար ազդեցությունը հայ գիտության և հատկապես փիլիսոփայության հետագա զարգացման վրա: Բանն այն է, որ հունաբանները, լինելով անտիկ գիտությանը քաջատեղյակ մարդիկ, ի տարբերություն նախորդ թարգմանիչների և գրողների, թարգմանությունների ընտրության և կատարման ընթացքում կիրառում էին նոր սկզբունքներ: Նրանք չավատեղյակ էին անտիկ աշխարհում մշակված և վաղ միջնադարում ընդունված գիտությունների կլասիֆիկացիային: Ըստ այդ կլասիֆիկացիայի, մարդկային գիտությունը բաժանվում էր բանական և գործնական արվեստների՝ իրենց հին առումով: Բանական արվեստը իր հերթին բաժանվում էր քերականու-

թյան, ճարտասանության և փիլիսոփայության (տրամաբանության կամ դիալեկտիկայի): Հետագայում որոշ փոփոխություններով և շրջանակների նեղացումով բանական արվեստի այս մասը դարձավ միջնադարյան կրթության եռյակի հիմքը: Փիլիսոփայությունը, որը գտնվում էր այդ կլասիֆիկացիայի կենտրոնում, նույնպես բաժանվում էր երկու մասի՝ տեսական փիլիսոփայության, որն ընդգրկում էր բնաբանությունը (ֆիզիկան), սաթեմատիկան և բնադանցությունը (մետաֆիզիկան, հետագայում՝ աստվածաբանությունը): Մաթեմատիկան իր հերթին բաժանվում էր շորս բաղկացուցիչ մասերի՝ թվաբանության, երաժշտության, երկրաչափության և աստղաբաշխության, որից առաջացավ միջնադարյան կրթության այսպես կոչված ֆառյակը:

Համադրելով այս հին կլասիֆիկացիան հունաբան դպրոցի արտադրանքի հետ, մենք տեսնում ենք, որ հունաբանները հետևողականորեն կիրառել են այն իրենց գործունեության մեջ և, ելնելով գիտության ամենախոշոր առաջին բաժանումից, որի մեջ ընդգրկվում էին քերականությունը, ճարտասանությունը և փիլիսոփայությունը, նախ ձեռնամուխ են եղել հայերեն քերականության ստեղծմանը, մի գիտության, որը դիտվել է կրթության նախապայման և առաջին անհրաժեշտ աստիճան:

Եվ ահա հունաբան ուղղության գործիչները 460—470-ական թթ. առաջին հերթին թարգմանում են հին հունական քերականության կարկառուն ներկայացուցիչ Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» երկը, որն իր ոճով, լեզվով ու բառապաշարով մի նոր երևույթ էր հայ գրականության համար: Դա նյութական թարգմանության մի փայլուն նմուշ է. հունարեն նախադասությունները բառացի թարգմանվում են հայերեն, հայերենում գոյություն չունեցող քերականական տերմինները ստեղծվում են հունարենի նմանությամբ, օգտագործելով հայերենի արմատները և կցելով դրանց նորաստեղծ արհեստական նախդիրներ, մասնիկ-ածանցներ: Նախադասության կառուցվածքը ձևվում է հունարենի վրա և դառնում է նմանահանություն՝ ի հաշիվ հայերենի շարահյուսության: Եթե անսովոր աշակերտի համար դա մի հայանման երկ է, դժվարիմանալի բովանդակությամբ, ապա հունական կրթություն ստացած հայի համար դա ճանաչված հուշարձանի մի ճշգրիտ պատկերն է՝ հայերեն գիտական լեզվով շարադրված, առանց ավելի դաբանությունների և նկարագրական տարտամության:

Թրակացու «Քերականության» թարգմանությունը կառուցված էր նաև փիլիսոփայական տերմինոլոգիայի մշակման համար: Այս թարգմանության ընթացքում ստեղծված շատ տերմիններ լայն տարածում գտան հետագա փիլիսոփայական թարգմանություններում: Եվ դա զարմանալի չէ, նկատի ունենալով այդ երկու գիտությունների, հատկապես քերականության ու տրամաբանության մերձությունը, մանավանդ հնում:

Հաջորդ գործը, համաձայն վերոհիշյալ կլասիֆիկացիայի, պետք է լիներ ճարտասանական երկի թարգմանությունը: Եվ իրոք, Թրակացու «Քերականությունից» հետո 470-ական թթ. թարգմանվեց «Պիտոլից գիրքը», որը կազմված էր հիմնականում Աֆտոնիոսի ճարտասանական դրվածքից: Նույն ժամանակաշրջանում թարգմանվում է նաև Թեոն Ալեքսանդրացու հայտնի «Ճարտասանական վարժություններ» երկը: Այս երկու թարգմանությունները ոչ միայն հիմք հանդիսացան ճարտասանական արվեստի ու գիտության զարգացման համար Հայաստանում, այլև զգալի չափով նպաստեցին փիլիսոփայության և

արվեստաբանությունը զարգացմանը: Ճարտասանությունը ավելի մոտ է: Կանգնած փիլիսոփայությունը, քան քերականությունը: Բացի հետոտրական արվեստից, այն որոշ չափով ընդգրկում էր արվեստի տեսություն և գրականագիտություն, վիճելու և համոզելու արվեստ, որոնք անհնար էին առանց փիլիսոփայության, առանց տրամաբանական օրենքների հետ ծանոթ լինելու: Մի խոսքով, ճարտասանական այս երկու կարևոր երկերի թարգմանությամբ հայ գործիչները ոչ միայն ստեղծեցին ճարտասանության զարգացման համար ամուր պատվանդան, ոչ միայն կերտեցին հարուստ ճարտասանական տերմինոլոգիա, այլև երկուսը քայլը կատարեցին «բանական արվեստը» յուրացնելու, փիլիսոփայական գիտությունը սերտորեն մերձենալու համար:

Դրանից հետո, արդեն շոշափելի բառապաշար կուտակած, կարելի էր մտածել փիլիսոփայական գործեր թարգմանելու և ստեղծելու մասին: Բայց սկզբից ընտրվում են թարգմանության համար համեմատաբար ավելի հեշտ և քրիստոնյա ընթերցողի համար սրտամոտ հեղինակի երկեր: Փիլիսոփայական թարգմանական գրականության հնագույն շերտին են պատկանում հելլենիստական աշխարհի ականավոր դեմքերից մեկի, I դարի խոշորագույն փիլիսոփա Փիլոն Եբրայեցու երկերի հայերեն թարգմանությունները, կատարված 470—480-ական թթ.: Նրա գրչին պատկանող գործերից շատերը պահպանվել են միմիայն հայերեն թարգմանությամբ (օրինակ, «Յաղագս նախախնամութեան», «Վասն լինելութեան», «Լուծմունք ելիցն», «Առանց պատրաստութեան ի Սամսուվն», «Յաղագս Յովնանու», «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ» և այլն): Դրանցից բացի, նույն ժամանակ հայերեն թարգմանվեցին Փիլոնի նաև այլ՝ հունարեն բնագրերով մեղ հասած երկերը: Հայ փիլիսոփայության և գրականության մեջ Փիլոնը զգալի հետք է թողել: Քաղվածքներ և առանձին նախադասություններ նրա գրվածքներից հանդիպում են արդեն V դարի հեղինակների մոտ՝ Եղիշեի, Մամբրե Վերծանողի, Մովսես Խորենացու «Պատմության» և նրան վերագրված «Պիտոյից գրքում», ինչպես և հետագայում Անանիա Շիրակացու, Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Սարկավազի և այլոց երկերում: Փիլոնի գործերը թարգմանելիս հունաբանները ստեղծում են բաղմաթիվ նոր հայերեն տերմիններ, բայց դրանք դեռ այն նեղ մասնագիտական տերմինները չեն, որոնք պետք են իմացաբանական, տրամաբանական և բնափիլիսոփայական խնդիրներով զբաղվելու համար: Այդ երկերն իրենց բնույթով ու բովանդակությամբ և՛ փիլիսոփայական են, և՛ աստվածաբանական: Նրանք հիմնականում նվիրված են Աստվածաշնչի, նրա Հին կտակարանի այլաբանական փիլիսոփայական մեկնաբանությանը, որն ընդունելի էր քրիստոնյա գաղափարախոսների համար: Այդ պատճառով Փիլոնի երկերը լայն տարածում գտան ողջ քրիստոնեական աշխարհում:

Փիլոնի գործերի, ինչպես նաև 480-ական թթ. կատարված՝ Երանոսի և Տիմոթեոս Կուղի դավանաբանական գրվածքների թարգմանության ընթացքում ստեղծված բաղմաթիվ փիլիսոփայական տերմիններ հնարավոր են դարձնում կատարելու երկուսը քայլը, այսինքն բարձրանալու աշխարհիկ գիտությունների եռյակի վերին աստիճանը: Իրա համար պետք էր նախ և առաջ տիրապետել տրամաբանական գիտությանը, իսկ դրա ճանաչված և լավագույն երկերը, ինչպես գիտեին Ալեքսանդրիայում ու Աթենքում ուսած հունաբանները, Արիստոտելի երկերն էին:

Սակայն մինչև Արիստոտելի բուն գործերի թարգմանությունն անցնելը, հունարան դպրոցի գործիչները կատարում են մի նախնական քայլ: Այդ ժամանակ բավականին տարածված էր հայտնի նորպլատոնական փիլիսոփա Պորփյուր Փյունիկեցու «Ներածություն ստորոգութեանցն Արիստոտելի» երկը, որը գնահատվում էր որպես ներածություն կամ մուտք՝ Արիստոտելի տրամաբանությունը և առհասարակ փիլիսոփայական գիտությունը ուսումնասիրելու համար: Հենց դրանից էլ 490-ական թթ. հունարան դպրոցի ներկայացուցիչները սկսում են փիլիսոփայական-առամաբանական երկերի իրենց թարգմանությունը, որը հնագույնն է մասնագիտական փիլիսոփայական թարգմանությունների շարքում: Միաժամանակ կատարվում է և ամենավճռական քայլը փիլիսոփայական մասնագիտական տերմինաբանության ստեղծման ուղղությամբ: Բաղմաթիվ տերմիններ, որոնք չկային հայերենում և որոնց բացակայությունը անհնար էր դարձնում այդ գիտության զարգացումը Հայաստանում, առաջին անգամ ստեղծվում են Պորփյուրի թարգմանության ընթացքում: Տերմինների հունաձև տառացի թարգմանության և հունարենի նրմանությամբ բառակերտման սկզբունքը, որը կիրառվեց քերականության և ճարտասանության բնագավառում, մարմնավորվեց նաև այս կարևոր փիլիսոփայական երկի հայկական տարբերակում: Ամեն մի հունարեն տերմինի դիմաց ստեղծվում է նրա հայկական համարժեքը՝ հունարենի բառակազմության օրինակով՝ նախդիր, ալմատ, վերջավորություն սկզբունքով: Հայերենում գոյություն չունեցող նախդիրները կերտվում են ի նորո, կամ օգտագործվում են նախկինում՝ քերականական ու ճարտասանական թարգմանություններում ստեղծվածները, բայց հետևողականորեն մեծ մասամբ աշխատում են հունարեն տվյալ նախդիրի դիմաց կիրառել նույն նորաստեղծ հայկականը:

Ունենալով արդեն որոշակի հաջողություն և փիլիսոփայական մասնագիտական տերմինների անհրաժեշտ մինիմում, հունարանները հնարավոր համարեցին ձեռնամուխ լինել Արիստոտելի երկերի և դրանց նվիրված մեկնությունների թարգմանությանը: Պորփյուրի «Ներածությունից» հետո 490-ական թթ. իրագործվեց Արիստոտելի «Ստորոգութեանց» և «Յաղագս մեկնութեան» երկերի թարգմանությունը, որոնց մեջ օգտագործվեց նախորդ տասնամյակներում ստեղծված ամբողջ քերականական, ճարտասանական և հատկապես փիլիսոփայական տերմինաբանությունը: Եվ քանի որ դա լիովին չէր կարող բավարարել Արիստոտելի երկերի բարդ ու հարուստ բառապաշարի փոխադրմանը, դրանց թարգմանության ընթացքում ստեղծվեցին տասնյակ նոր մասնագիտական տերմիններ: Հայերեն փիլիսոփայական բառապաշարը այնքան հարստացավ, որ նրա միջոցով արդեն կարելի էր արտահայտել ուղած վերացական միտքը և գաղափարը, թարգմանել մյուս ավելի հեշտ հեղինակներին ու ստեղծել ինքնուրույն տրամաբանական, իմացաբանական երկեր: Դրանից հետո առանձին դժվարություն չէր ներկայացնում Արիստոտելի երկերին նվիրված մեկնությունների թարգմանությունը կամ նորպլատոնականների երկերի հայացումը:

Արիստոտելից հետո 490—500-ական թթ. թարգմանվում են հայտնի նորպլատոնական Յամբլիխոսին վերագրվող երկու ընդարձակ մեկնություններ՝ նվիրված «Ստորոգութեանց» և «Յաղագս մեկնութեան» երկերին, որոնք ամբողջությամբ ընդգրկում են մեկնվող աշխատությունների բնագրերը: Սակայն պետք է շեշտել, որ սկզբնական շրջանում այդ անսովոր և արհեստական

հայերենով լույս ընծայվող աշխատությունները, հավանաբար, հասկանալի էին լինում առավելապես հունական կրթություն ստացած մտավորականներին, որոնք աստիճանաբար ընտելանում էին նոր տերմիններին ու դարձվածքներին:

Անտարակույս, սկզբնական շրջանում շափազանց դժվար պետք է լիներ այդ նորաստեղծ բառապաշարով ինքնուրույն փիլիսոփայական երկեր գրելը: Որոշ ժամանակ էր հարկավոր աչդ մասնագիտական լեզուն ու տերմինները մարսելու համար: Ուստի, հավանաբար, հունական կրթություն ստացած իմաստասերների համար սովելի դուրին պետք է լիներ իրենց գործերը նախապես գրել վաղուց կայունացած և միջազգային նշանակություն ունեցող հունարենով և ապա դրանք թարգմանել հայերեն, օգտագործելով նախորդ թարգմանություններում ստեղծված բառերը, շտկել անհաջողները և կերտել նորերը: Որ հենց այդ ճանապարհով են գնացել հունաբան դպրոցի գործիչները, վկայում է Դավիթ Անհաղթի ստեղծագործությունը: Նրա երկերի պահպանված հունարեն և հայերեն տարբերակները, ինչպես ապացուցել են Ն. Ազոնցը և Հ. Մանանդյանը, վկայում են, որ մասնագիտական փիլիսոփայական այնպիսի երկեր, ինչպիսիք են «Սահմանք իմաստասիրության», Արիստոտելի «Անալիտիկայի» ու «Կատեգորիաների», նաև Պորփյուրի «Ներածության» հմտալից մեկնությունները, Դավիթ Անհաղթը շարադրել է նախ հունարեն լեզվով V դարի վերջում և VI դարի սկզբին, իսկ այնուհետև՝ մինչև VI դարի կեսերը, դրանք թարգմանվել են հայերեն, հավանաբար, հեղինակի հսկողությամբ կամ մասնակցությամբ:

Դավիթ Անհաղթի երկերի շնորհիվ հայ փիլիսոփայությունը թևակոխեց իր զարգացման մասնագիտական փուլը և, անջատվելով կրոնա-դավանաբանական տեսություններից, դարձավ առանձին, ինքնուրույն գիտություն՝ սեփական խնդիրներով, մասնաճյուղերով և հղկված տերմինաբանությամբ: Նրա գործերով Հայաստանում ստեղծվեց փիլիսոփայական մի ուղղություն, որն այն ժամանակ ամենատարածվածն էր Արևմուտքում և Մերձավոր Արևելքում: Դա նորպլատոնականությունն էր, որն իր սինկրետիկ բնույթով, օբյեկտիվ-իդեալիստական հիմքի վրա Արիստոտելի, Պլատոնի և ստոիցիզմի գաղափարների դուգակցումով առավել ընդունելի էր հաղթանակած քրիստոնեության համար:

Հունաբան դպրոցի հսկայական գիտական և լեզվաշինարարական աշխատանքի շնորհիվ մի ժողովուրդ, որն ընդամենը հարյուր տարի առաջ էր ձեռք բերել իր գիրը և հիմք դրել սեփական դպրության, հնարավորություն է ստանում իր լեզվով կարդալու այն ժամանակվա ամենաբարդ փիլիսոփայական երկերը: Այդ դպրոցի խոշորագույն նվաճումներից մեկն էր նաև հռչակավոր հույն իմաստասեր, անտիկ փիլիսոփայության կարկառուն ներկայացուցիչ Պլատոնի երկերի թարգմանությունը, կատարված VI դարի սկզբում: Հունաբանները, մեծ մասամբ իրենց կրթությունը ստանալով նորպլատոնականության խոշորագույն կենտրոն Ալեքսանդրիայում և հարելով նորպլատոնական ուղղությանը, կանգ չառան ոչ մի դժվարության առաջ և հայ ընթերցողին տվեցին իրենց հույևոր հոր՝ Պլատոնի երկերի («Տիմեոսի», «Եվտիփրոնի», «Մենոսի», «Սոկրատի պաշտպանության» և «Թենեթների») հմուտ թարգմանությունները:

Պորփյուրի, Արիստոտելի և Պլատոնի երկերի թարգմանությունների շնորհիվ և հատկապես Դավիթ Անհաղթի աշխատություններով հայ փիլիսոփայական գրականությունը աստիճանաբար մասնագիտանում ու աշխարհականանում էր իր էությունով ու բովանդակությամբ։ Այդ երկերը, հիմնականում նվիրված լինելով գոյաբանության, իմացաբանության, տրամաբանության, մասամբ նաև հասարակագիտության ու բարոյագիտության խնդիրներին, հայ իրականության մեջ դառնում են փիլիսոփայական գիտությունների զարգացման համար հաստատուն հիմք՝ համապատասխան հարուստ ու ճկուն տերմինոլոգիայով և հայ փիլիսոփայական միտքը բարձրացնում ժամանակակից զարգացած երկրների գիտության մակարդակին։ Բացի այդ, արդեն VI դարի առաջին կեսին, շուրջ մեկգարյա եռանդուն գործունեության շնորհիվ, դասական շրջանի հայ հեղինակների և հունաբան դպրոցի գործիչների ստեղծած թարգմանական և ինքնուրույն ժառանգության շնորհիվ հայոց լեզուն և ողջ հայ հոգևոր մշակույթը բարձրանում ու կանգնում են այն ժամանակվա ամենամշակված դրական լեզուների՝ հունարենի, ասորերենի, լատիներենի, պարսկերենի և նրանց հիման վրա ստեղծված մշակույթների շարքը։

Արիստոտելի, Պորփյուրի և հատկապես Դավիթ Անհաղթի գաղափարների ու տերմինաբանության որոշակի աղղեցությամբ են իրենց երկերը գրում և հունարենից թարգմանում VI, VII և VIII դարերի հայ իմաստասերներ Պետրոս Սյունեցին, Դավիթ Հարթացին, Խոսրովիկ Թարգմանիչը, Անանիա Շիրակացին և Ստեփաննոս Սյունեցին։ VI դարի երկրորդ կեսին հունարենից թարգմանված ուսումնա-փիլիսոփայական բնագրերը, ինչպիսիք են Զենոնին վերագրվող «Յաղագս բնութեան» տրակտատը, Պսելդո-Արիստոտելի «Յաղագս աշխարհի» և «Յաղագս առաքինութեան» բնագրերը, ինչպես նաև «Սահմանք փիլիսոփայականք» և մի քանի այլ փոքր փիլիսոփայական տեքստեր, գրեթե ամբողջությամբ օգտագործում են Արիստոտելի և Դավթի մասնագիտական տերմինոլոգիան և նույն ուսուցողական նպատակներն են հետապնդում, ինչ և Պետրոս Սյունեցու, Դավիթ Հարթացու ինքնուրույն՝ ծավալով ոչ ընդարձակ փիլիսոփայական գործերը։

Հետդավթյան շրջանի հայ փիլիսոփաներից հատուկ հիշատակման արժանի է Անանիա Շիրակացու վաստակը, որն իր տիեզերագիտական և մաթեմատիկական աշխատություններով հայ փիլիսոփայության մեջ հիմք դրեց բնագիտական ուղղության։ Անանիա Շիրակացին, VII դարի այդ բեղմնավոր փիլիսոփան և գիտնականը, ընդարձակում է հայ փիլիսոփայական մտքի շրջանակները բնափիլիսոփայական, բնագիտական ուսմունքներով, դրա համար օգտագործելով անտիկ ժառանգությունը։ Շիրակացին շարունակում է զարգացնել աշխարհիկ գիտական միտքը։ Որպես բնագետ-փիլիսոփա Շիրակացին հարստացնում է հայ իմաստասիրական բառուպաշարը հիմնականում բնագիտական տերմիններով։ Հավանաբար նրան են պատկանում Պապպոս Ալեքսանդրացու, Պողոս Ալեքսանդրացու և այլոց աստղաբաշխական ու օդերևութաբանական երկերի թարգմանությունները։

Շիրակացուց հետո բնագիտական ուղղությունը հարստանում է երկու արժեքավոր երկերի թարգմանությամբ ևս։ 'Իրանք Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» և Գրիգոր Նյուսացու «Յաղագս մարդոյ կազմութեան» բնափիլիսոփայական, մարդակազմական երկերն են, որ 712 թ. թարգ-

մանում է անվանի գիտնական Ստեփաննոս Սյունեցին։ Այս երկերի թարգմանության շնորհիվ ստեղծվում և հղկվում են հայ բժշկագիտական և բնափիլիսոփայական բազմաթիվ տերմիններ, որոնք հետագայում լայն տարածում են ստանում միջնադարյան գիտական գրականության մեջ։ Ստեփաննոս Սյունեցին գրում է և ինքնուրույն փիլիսոփայական ու քերականագիտական աշխատություններ, նվիրված Դավիթ Անհաղթի «Սահմանաց գրքի» և Թրակացու «Քերականության» մեկնաբանությանը։

Սյունեցու գրական վաստակի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Կեղծ-Դիոնիսիոս Արեոսյագացու երկերի թարգմանությունը, որը, ցավոք, չի գրավել մեր փիլիսոփաների ու բանասերների ուշադրությունը։ 716—717 թթ. Սյունեցին՝ Դավիթ Հյուպատի աշխատակցությամբ թարգմանում է Արեոսյագացու «Յաղագս երկնային քահանայապետութեան», «Յաղագս եկեղեցական քահանայապետության», «Յաղագս աստուծայնոց անուանց», «Յաղագս խորհրդականի աստուծաբանութեան» ծավալուն երկերը և 10 թղթերը։

Ստեփաննոս Սյունեցու և Դավիթ Հյուպատի թարգմանությունները հարստացրին հայ փիլիսոփայական, բնագիտական և աստվածաբանական գրականությունը և ավելի ճոխացրին նրա տերմինաբանությունը։

* * *

V—VII դարերի թարգմանությունները հայ միջնադարյան գրականության ու գիտական մտքի ամենափայլուն նվաճումներից մեկն են։ Մաշտոցյան և հունաբան թարգմանչական դպրոցների մեծագույն երախտիքը հայ մշակութային զարգացման գործում կայանում է նրանում, որ և՛ իրենց մեծարժեք թարգմանություններով, և՛ ինքնուրույն երկերով նրանք հայ դպրությունը բարձրացրին ժամանակի զարգացած գրականությունների մակարդակին։

Հին հայկական թարգմանությունների պատմա-մշակութային արժեքն ու նշանակությունը չի սահմանափակվում հայ գրականության ու գիտության շրջանակներով։ Անտիկ շրջանի և վաղ-քրիստոնեության բազմաթիվ գրական հուշարձաններ, ինչպես, օրինակ, Փիլոն Ալեքսանդրացու, Իրենեոսի (Երանոսի), Արիստիդես Աթենացու, Հերմես Նոամեծի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Հովհան Ոսկեբերանի, Նվսեբիոս Կեսարացու, Տիմոթեոս Ալեքսանդրացու և այլ հին հեղինակների գործեր փրկվեցին համաշխարհային գրականության ու գիտության համար հայկական թարգմանությունների շրջնորհիվ։ Իսկ այն թարգմանությունները, որոնց հունարեն բնագրերը պահպանվել են, ավելի հարազատ են հին հեղինակային նախազադափսր օրինակներին և հնարավորություն են տալիս արժեքավոր սրբագրություններ կատարել պահպանված ավելի ուշ շրջանի բյուզանդական ընդօրինակություններում։

Հնագույն հայկական թարգմանությունները դարձան միջնադարյան հայ գրականության ու գիտության կարևոր բաղկացուցիչ մասը և ողջ միջնադարի համար մնացին թարգմանչական արվեստի ու վարպետության չգերազանցված օրինակ։

ДРЕВНЕЙШИЕ АРМЯНСКИЕ ПЕРЕВОДЫ И ИХ КУЛЬТУРНО-ИСТОРИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ

Доктор философ. наук С. С. АРЕВШАТЯН

(Резюме)

Переводная литература V—VII веков, созданная деятелями масштабной и грекофильской переводческих школ, сыграла важную роль в становлении древнеармянской письменности и обогатила ее ценнейшими памятниками античной и раннехристианской литературы. Эти переводы (Библия, сочинения Евсевия Кесарийского, Василия Великого, Аристотеля, Платона, Теона Александрийского, Порфирия и др.) форсировали развитие древнеармянской оригинальной литературы и подняли ее до уровня высокоразвитых литератур того времени.

Культурно-историческое значение древнеармянских переводов не ограничивается рамками армянской словесности. Эти переводы принадлежат к числу древнейших и классических памятников мировой переводной литературы. Кроме того, целый ряд произведений античной и ранневизантийской науки и литературы, утраченных в оригинале (Филон Александрийский, Иреней, Аристид, Григорий Назианзин, Иоанн Златоуст, Евсевий Кесарийский и др.), были сохранены для мировой литературы благодаря древнеармянским переводам. Памятники переводной литературы, явившись важным компонентом древнеармянской науки и письменности, стали непревзойденными образцами переводческого мастерства для всего армянского средневековья.